ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԻՆ

Մայիսի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին հանձնեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը, համաձայն որի 2007 թ. հունվարի 27-ին գեներալ-լեյտենանտ Սեյրան Օհանյանին էր հանձնվել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վեհարանում ողջունեց տիար Սեյրան Օհանյանին՝ ուրախություն հայտնելով նրան կրկին Սուրբ Էջմիածնում տեսնելու առիթով: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ Հայոց բանակն ու նրա զորավարները միշտ իր աղոթքների մեջ են, և Տիրոջ օրհնությունը հայցեց, որ Նրա Աջը մշտապես պահապան լինի հայ զինվորին ու հայ զորականին՝ անսասան պահելու մեր Հայրենիքի սահմանները և անխոով՝ մեր ժողովրդի խաղաղությունը: Նորին Սրբությունը նաև փաստեց, որ Հայաստանյայց Եկեղեցին միշտ Հայոց բանակի կողքին է եղել, ինչի վառ առհավատչյաներից են մեր մայիսյան հաղթանակներում Հայոց Եկեղեցու գործուն ներկայությունը:

Սեյրան Օհանյանն իր երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ցուցաբերած բարձր պատվի համար: ՀՀ Պաշտպանության նախարարը խիստ կարևորեց այն հսկայական ավանդը, որ ներդրել է Հայաստանյայց Եկեղեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարի, հայ զինվորի ու զորավարի ոգու կերտման ու դաստիարակության սրբազան առաքելության մեջ: Սեյրան Օհանյանը փաստեց, որ ներկա ժամանակում նույնպես Հայաստանյայց Եկեղեցին հավատարիմ է իր այդ առաքելությանը՝ մասնավորապես ընդգծելով Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ Հայոց բանակում հոգևոր սպասավորություն իրականացնող հոգևորականների առկայության վիթխարի արդյունավետությունը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը ՀՀ Պաշտպանության նախարարին հանձնեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը: Կոնդակում մասնավորապես ասված է. *«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Ձեզ և գնահատում հավատավոր հայորդուդ ազգանվեր կյանքն ու գովարժան ծառայությունները մեր Հայրենիքին ու ժողովրդին:*

Դեռևս խորհրդային ժամանակաշրջանում երկար տարիներ Դուք ծառայել եք Խորհրդային Միության զինված ուժերում և զբաղեցրել եք զինվորական պատասխանատու պաշտոններ՝ դրսևորելով քաջ զորականին հատուկ հմտություն ու կարողություններ, որի վկայությունն են Ձեզ տրված պատվո բազմաթիվ պարգևատրումները: Ձեռք բերած հարուստ փորձառությամբ, հրամանատարական ու կազմակերպչական ունակություններով Դուք գովելի սպասավորություն բերեցիք Արցախի ազա-

տության ու անկախության համար մղվող արդար պայքարին: Արցախի անկախության վերահաստատումից հետո, որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության նախարար, հայրենի երկրի և ժողովրդի հանդեպ սիրով զգալի ավանդ ունեցաք Արցախի հայրենանվեր զինվորների քաջարի ոգու ամրապնդման և արցախյան հերոսական բանակի հզորացման ու մարտունակության ամրապնդման կարևոր գործում:

Գոհունակություն է Հայրապետիս համար անդրադառնալ, որ այսօր Դուք նույն նախանձախնդրությամբ ու եռանդով շարունակում եք գովելի ծառայություն իրականացնել Հայաստանի Հանրապետության Զինված Ուժերի համակարգում՝ ի խնդիր անկախ մեր Մայր Հայրենիքի ապահով ու խաղաղ առաջընթացի, Հայոց հերոսական բանակի ազգօգուտ ու հայրենաշահ ծառայության նորոգ արդյունավորման»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ